Հաղորդագրություն

2019 թվականի օգոստոսի 16-ին կայանալիք Դատավորների արտահերթ ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի կարգավորումների ուժով՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից սույն թվականի օգոստոսի 1-ին ծանուցագրեր են ուղարկվել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամ ընտրվելու իրավունք ունեցող Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 9 դատավորի:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատից ստացվել է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուների 4 դիմում՝ իրենց անունները քվեաթերթիկում չներառելու մասին:

Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության քվեաթերթիկում ներառվելու է ներքոնշյալ՝ 5 դատավորի անուն.

Հ/հ	Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, դատարանի անվանումը, դատավորի մասնագիտացումը
1.	**Անտոնյան Սուրեն Ռաֆիկի** (Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ)
2.	**Դրմեյան Մամիկոն Լիբկնեխտի** (Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ)
3.	**Հակոբյան Գոռ Գագիկի** (Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ)
4.	**Միքայելյան Ստեփան Կարոյի** (Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ)
5.	**Պետրոսյան Տիգրան Ռաֆիկի** (Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ)